



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Դեղերի և թույների ազդեցությունները

ԱՌԱՐԿԱ

Քիմիա

ՀԵՂԻՆԱԿ

Անահիտ Մարգարյան

ՄԱՐԶ

Արմավիր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Փարաքարի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	Էջ 3
Գլուխ I. Դեղերի և թույների ազդեցությունները.....	Էջ 5
Եզրակացություն.....	Էջ 17
Օգտագործված գրականության ցանկ	Էջ 19

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Ժողովրդական բժշկությունում դարերի ընթացքում կուտակվել են գիտելիքներ բուժիչ միջոցների և հնարների վերաբերյալ: Բժշկագիտության զարգացման հետ ի հայտ են եկել գիտական մոտեցումներ բուժիչ ազդեցությամբ քիմիական նյութերի ստացման և օգտագործման ոլորտում:

Մինթետիկ օրգանական քիմիայի զարգացումը նպաստեց հսկայական թվով դեղեր ստանալուն, որոնք մարդուն օգնում են պայքարելու հիվանդությունների դեմ և լինել ավելի պաշտպանված: Սակայն դեղերը ստեղծել են նաև որոշ դժվարություններ: Դեղերը գործում են մոլեկուլային մակարդակով: Դրանց յուրահատկությունը հաճախ կախված է մոլեկուլի կառուցվածքից:

Դեղերի մեծ մասն ազդում է սպիտակուցի կամ բջջաթաղանթի այնպիսի ընկալիչների վրա, որոնք քիմիական հատկություններով և ձևով նման են դեղին: Ընկալիչներն օգնում են սկսելու պահանջվող կենսաբանական պատասխանը՝ ցավի թուլացում, ջերմաստիճանի իջեցում և այլն:

Ցավի զգացումը վերացնելու համար նյարդային ազդանշանները ուղեղին հասնելու ճանապարհին պետք է ինչ-որ ձևով շրջափակվեն: Դա տեղի է ունենում, եթե ձևով և բաղադրությամբ համապատասխանող դեղի մոլեկուլները փոխազդում են ուղեղի բջջաթաղանթում գտնվող սպիտակուցների վրայի ընկալիչների հետ: Դեղը փոխում է թաղանթի կառուցվածքն այնպես, որ վերջինս բաց չի թողնում ցավային ազդանշանը: Ներկայումս որպես բուժամիջոցներ կիրառվում են հինգ հազարից ավելի նյութեր: Նոր դեղերի փնտրտուքն այսօր էլ շարունակվում է:

Թմրամոլության թեման այսօր համարվում է խիստ արդիական, քանի որ դրա լայն տարածումը պահանջում է այնպիսի լուրջ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն, որոնք թույլ կտան կանխել դրա արմատավորումը պատանիների և երիտասարդների շրջանում: Չէ որ հենց այդ կատեգորիան է առավել խոցելի բացասական ազդեցության և արտաքին ներգործության տեսանկյունից:

Հետազոտության նպատակը: Հետազոտության նպատակն է նպաստել առողջ ապրելակերպի մշակույթի և արժեքների ձևավորմանն ու տարածմանը և բացասական երևույթների նկատմամբ կայուն բացասական վերաբերմունքի արմատավորմանը:

Հետազոտության խնդիրները: Հետազոտության խնդիրներն են վեր հանել դեղերի և թույների ազդեցության առանձահատկությունները, դեղերի և թույների տեսակները, դրանց օգտագործումը քիմիայում, ինչպես նաև թմրամոլության բացասական ազդեցությունը:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության մեթոդներն են՝ զրույց, դիտում, փորձ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ ուսումնասիրություն կատարողների համար և գործնական նշանակություն՝ դպրոցների քիմիայի ուսուցիչների համար:

Գլուխ I. Դեղերի և թույների ազդեցությունները

Դեղաբանությունը (ֆարմակոլոգիան) գիտություն է, որն ուսումնասիրում է դեղանյութերի ազդեցությունը օրգանիզմի վրա: Այն նյութերը, որոնք օրգանիզմի վրա թողնում են բուժիչ արդյունք և օգտագործվում են հիվանդների բուժման, տարբեր հիվանդությունների կանխարգելման և ախտորշման համար կոչվում են **դեղանյութեր**:

Մեկ կամ մի քանի դեղանյութերից բաղկացած պատրաստուկները, որոնք թողարկվում են որոշակի դեղաձևերով կոչվում են **դեղապատրաստուկներ**:

Դեղապատրաստուկի որոշակի քանակը, որն ունի ընդունման համար հարմար ձև, կոչվում է **դեղաձև**: Դեղաձևերը լինում են արտաքին և ներքին օգտագործման: Ըստ ֆիզիկական ձևի՝ լինում են **փափուկ, կարծր, հեղուկ**:

Կարծր դեղաձևեր՝ դեղահաբեր, դրաժեներ, փոշիներ

Դեղահաբեր (Tablettae)

Դոզավորված կարծր դեղաձևեր են, որոնք ստացվում են դեղագործական գործարաններում՝ դեղանյութերի մամլման միջոցով:



Դրաժե

Դոզավորված կարծր դեղաձև է ներքին ընդունման համար, որը ստացվում է շաքարհատիկների վրա դեղանյութի և օժանդակ նյութի շերտավորումով: Նրանք ունեն գնդի ձև, հարթ մակերես:

Փոշիներ

Կարծր դեղաձևեր են, որոնք օգտագործվում են արտաքին և ներքին օգտագործման համար: Տարբերում են պարզ և բարդ փոշիներ:

Ըստ ձևի լինում են դոզավորված և չդոզավորված:

Հեղուկ դեղաձևեր՝ լուծույթներ, ջրաթուրմեր, խաշուկներ, էմուլսիաներ, սուսպենզիաներ, խառնուրդներ:

Լուծույթներ

Բաղկացած են լուծիչից և նրա մեջ լուծված նյութից:



Էմուլսիաներ

Էմուլսիաները դեղաձևեր են, որոնք կազմված են փոխադարձաբար իրար մեջ չլուծվող 2 հեղուկներից: Օգտագործում են արտաքին և ներքին օգտագործման համար:



Միքստուրաներ (խառնուրդներ)

Միքստուրաները հեղուկ դեղաձևեր են, կազմված՝ հեղուկ, կարծր դեղաձևերից: Օգտագործելուց առաջ թափահարում են: Ներքին օգտագործման համար է:


Կախությունը (սուսպենզիաներ)



Կախությունը բաղկացած են հեղուկից և նրա մեջ կախված վիճակում գտնվող դեղանյութերի մասնիկներից:

Կախությունըն օգտագործում են ներքին, արտաքին և ներմկանային ձևով:




Դեղերը փոխում են ուղեղի կամ մարմնի քիմիան: Ունենալով տարբեր կիրառություններ՝ որոշ դեղամիջոցներ խթանում կամ, հակառակը ճնշում են ուղեղի գործունեությունը, մյուսները հանում են ցավը կամ նվազեցնում բորբոքումները, երրորդները լրացնում են օրգանիզմում ինչ-որ նյութի պակասը: Նշված և այլ գործառությունները կատարվում են մոլեկուլային մակարդակով, շատ հաճախ՝ մարմնի որոշակի հատվածում: Դիտարկենք դրանցից **ադրենալինը**: Սա օրգանիզմի կենսագործունեության արգասիք է՝ ենթաստամոքսային գեղձի արտադրած հորմոնն է /վախի հորմոն/, որն անցնելով արյան մեջ շրջանառում է օրգանիզմում՝ ակտիվացնելով սրտի և այլ օրգանների աշխատանքը: Ազդելով համապատասխան ընկալիչների վրա՝ ադրենալինն օրգանիզմը նախապատրաստում է ֆիզիկական աշխատանքի: Օգտագործվում է նաև որպես դեղամիջոց ալերգիկ հիվանդությունների դեպքում:





Adrenalin



Ռիտալինը (methylphenidate) կենտրոնական նյարդային համակարգի խթանողն է: Այն ազդում է ուղեղի եւ նյարդերի քիմիական նյութերի վրա, որոնք նպաստում են հիպերտակտության եւ խթանման հսկողության:

Դեղերի ազդեցության պարզաբանման համար ներկայացնենք մի շարք դեղամիջոցներ, որոնք ունեն ցավազրկող, թմրեցնող-ցավազրկող, հոգեմետ (հոգեներգործուն) հատկություններ:

Ասպիրին (ացետիլսալիցիլաթթու)

Պատկանում է սալիցիլատների դասին: Թույլ ցավազրկող, բազմակողմանի դեղամիջոց է՝ մեղմում է բորբոքային, հյուսվածքների վնասման հետ կապված, շարակցական հյուսվածքի և ծածկույթի ցավերը, սակայն գրեթե անարդյունավետ է ընդերային և իշեմիկ ցավերի դեպքում: Ցավազերծող ազդեցությունը հիմնականում հետևանք է ծայրամասային ցավաընկալիչների զգայունության նվազման, ինչը պայմանավորված է նյարդային վերջույթների՝ PG-ով միջնորդված գերզգայունության վերացմամբ:

Առկա է նաև ազդեցության կենտրոնական բաղադրիչ՝ ենթակեղևային մակարդակով ազդեցության արդյունքում ցավազգայունության շեմի բարձրացում: Ասպիրինին բնորոշ չեն հանգստաբեր ազդեցությունը, հոգեհուզական ոլորտի փոփոխությունները, ընտելացումը և ֆիզիկական կախվածությունը: Ասպիրինը, ազդելով ենթատեսաթմբում տեղակայված ջերմակարգավորման կենտրոնի վրա, ակտիվացնում է ջերմատվությունը. տենդի դեպքում արագ իջեցնում է մարմնի ջերմաստիճանը (քրտնարտադրություն, մաշկի անոթների լայնացում): Սակայն միևնույն ժամանակ ասպիրինը չի իջեցնում ջերմագոյացումը: Հակաբորբոքային ազդեցությունը դրսևորվում է մեծ դեղաչափերով կիրառելիս (3-6 գ/օր, կամ 100 մգ/կգ/օր): Բորբոքման ախտանիշները՝ ցավը, գերզգայունությունը, այտուցը, անոթալայնացումը և լեյկոցիտային ինֆիլտրացումը ընկճվում են: Սակայն բուն հիվանդության ընթացքը (ռևմատաբնույթ հոդաբորբը, ռևմատիզմը, ոսկրահոդաբորբ (օստեոարթրիտ) մնում է անփոփոխ: Ունենալով թթվային հատկություն՝ որոշ մարդկանց ստամոքսում առաջացնում է ցավեր, գրգռում է ստամոքսի պատերը, վնասում լորձաթաղանթը:

Մեթադոն՝ թմրեցնող ցավազրկող

Թերապևտիկ դեղաչափերով մեթադոնը ցուցաբերում է ցավազրկող և հանգստացնող ազդեցություն: Այն ազդում է կենտրոնական նյարդային համակարգի, սիրտանոթային համակարգի և հարթ մկանների վրա: Ազդեցությունն սկսվում է օրալ ուղիով ընդունելուց 20-30 րոպե անց: Ցավազրկող ազդեցությունն ի հայտ է գալիս 4-6 ժամ անց: Մեթադոնի ազդեցությունը պահպանվում է 24-72 ժամ՝ կախված

դեղաչափից և նյութափոխանակությունից: Մեթադոնից կախվածությունն առաջանում է դանդաղ: Թմրեցնող և էֆորիկ ազդեցությունները նման են մորֆինի ազդեցությանը: Պատահական օգտագործողի համար նվազագույն ճակատագրական դեղաչափը 50 մգ է: գլխապտույտ, սրտխառնոց, փսխում: Գերդոզավորման դեպքում ի հայտ է գալիս շնչառական դեպրեսիա, արյան շրջանառության վատացում՝ ընդհուպ մինչև սրտի աշխատանքի կանգ, թոքային այտուց, միզապարկի սպազմ, երիկամային սուր անբավարարություն, գիտակցության խանգարում՝ ընդհուպ կոմա: Մշտական գործածման դեպքում կարող են ի հայտ գալ հետևյալ ախտանշանները՝ թուլություն, շնչառական խնդիրներ, մարմնի ջերմաստիճանի և արյան ճնշման բարձրացում, լեղածորանի սպազմ, հնարավոր է նաև անքնություն, իսկ քնի ընթացքում հնարավոր է սրտի կանգ: Պատահական գերդոզավորման դեպքում հաճախ հնարավոր է ճակատագրական հետևանքներով կոմային վիճակի առաջացում:

Թմրանյութեր , հոգեմետ միջոցներ

Ազդեցության արդյունավետությունը կախված է քանակից: Փոքր չափաբաժիններով թմրանյութերն ունեն խթանիչ ազդեցություն, այնինչ մեծ չափաբաժինների ազդեցությունն ընկճող է (սեդատիվ): Առավել մեծ քանակներն ազդում են մարդու բանականության վրա, կարող են հասցնել մահվան:


Մարիխուանա (լատ.՝ marijuana, marihuana)

Անվանում են նաև կանեփ, պլան, խոտ, անաշա, բամբուկ, գանջա, գանջ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ է, որը ստանում են կանեփից: Մարդու օրգանիզմի վրա ազդեցությունը պայմանավորված է կանեփում պարունակվող հոգեմետ նյութերով (կանաբինոլիդներով), որոնցից ամենաակտիվն է ՏՀԿ-ն (դելտա 9-տետրահիդրականաբինոլ): Տարբերում ենք կանեփի երեք հիմնական տեսակ՝ սովորական կանեփ (լատ.՝ Cannabis sativa), հնդկական կանեփ (լատ.՝ Cannabis indica), մոլախոտային կանեփ (լատ.՝ Cannabis ruderalis)

Սովորական, չորացրած, հոգեմետ նյութեր պարունակող կանեփը (մարիխուանա), պարունակում է միջինը 2— 4 % տետրահիդրոկանաբինոլ (առանձին դեպքում՝ 10%), 0,31 % կանաբինոլ, 0,05 % կանաբինոլային թթու:

Տետրահիդրոկանաբինոլը միակ հոգեմետ նյութը չէ, չնայած, որ մնում է ամենակարևորը: Դատելով կենդանիների և մարդկանց վրա ազդեցությունից՝ կանեփի

էքստրակտները, 2 կամ ավելի անգամ երկարատև ազդեցություն են ունենում, քան տետրահիդրոկանաբինոլը:



Կանեփի բժշկական էքստրակտը

Բժշկության մեջ մարիխուանա գործածել են դեռևս Հին Հնդկաստանում և Մերձավոր Արևելքում, որտեղ կանեփը լայն տարածում էր գտել որպես ցավազրկող, հակաէպիլեպտիկ, հակացնցումային միջոց: Ժամանակակից տվյալներով (2011թ) մարիխուանայի օգտագործումը քրոնիկ ցավով տառապողների համար (մասնավորապես նրանց, ովքեր ունեն չարորակ քաղցկեղ) թույլ է տալիս նվազեցնել ցավը օպիոիդային անալգետիկների հետ միաժամանակյա նվազեցման դեպքում: Կանեփի դեղամիջոցների հակափսխման գործառույթը հատկապես օգտակար է քաղցկեղի քիմիոթերապիայի և ՉԻԱՀ-ի ժամանակ:

Հնդկական կանեփում, ինչպես նաև դրանից պատրաստվող դեղամիջոցներում կան այնպիսի նյութեր, որոնք կապ ունեն էնդոգեն կանաբինոիդների (էնդականաբինոիդների) հետ, մասնավորապես՝ անանդամիդի:

Ուղեղի էնդոկանաբինոիդային համակարգը մասնակցում է ցավի, հիշողության, ներողեզեներացիայի մի շարք գործընթացների և որ կանաբինոիդներն ունեն հատուկ կլինիկական պոտենցիալ:

Մարիխուանան և նրանից պատրաստվող դեղամիջոցները հաջողությամբ օգտագործվում են քաղցկեղով և ՁԻԱՀ-ով հիվանդների վիճակը բարելավելու համար: ՏՀԿ-ն օգնում է նաև քաղցկեղի դեղամիջոցներից առաջացած սրտխառնոցի դեպքում:

Մորֆին ստանում են ափիոնից, իսկ ափիոնը՝ քնաբեր կակաչից:

Ափիոն (կակաչի արցունքներ (անգլ.՝ *poppy tears*, լատ.՝ *lachryma papaveris*)), քնաբեր կակաչից (խաշխաշ, լատ.՝ *Papaver somniferum*) ստացվող կաթնահյութի (պարունակվում է քնաբեր կակաչի չհասունացած տուփիկների կաթնանոթներում) չորացրած տարբերակն է :





Այն ունի յուրահատուկ հոտ և դառը համ, պատկանում է ցավազրկող միջոցների շարքին: Բժշկական նպատակներով կիրառվող ափիոնը պետք է պարունակի 10% մորֆին: Մորֆինը ֆենանտրենի խմբի ալկալոիդ է: Այս խմբի մեջ է մտնում նաև կոդեինը: Իզոխինոլինի ածանցյալներից է պապավերինը: Մորֆինն օժտված է քնաբեր, թմրեցուցիչ հատկություններով: Վերացնում է ցավը, տազնապը, անհանգստությունը, առաջանում է էյֆորիա: Քունը մակերեսային է, և քանի որ ողնուղեղը դրդված է, հիվանդին թվում է, որ ինքը մասնակցում է այն գունավոր երազներին, որոնք տեսնում է և որոնք բովանդակությամբ համընկնում են իր ցանկություններին: Այս հոգեկան հանգիստը, երանելի վիճակը հիվանդի մոտ ցանկություն է առաջացնում կրկին ընդունել մորֆին: Ջարգանում է կախվածություն, թմրամոլություն՝ մորֆինիզմ:



Կոկաին / Էկգոնիլբենզոատ /

Քիմիական բանաձևը՝ $C_{17}H_{21}NO_4$




Կոկաին, բենզոիլմեթիլէկգոնինի մեթիլէթեր, էկգոնինի ածանցյալ, տրոպանային շարքի ալկալոիդ, ունի տեղային անզգայնացնող և հոգեներգործուն ազդեցություն: Այլ ալկալոիդների հետ միասին պարունակվում է Erythroxylum ցեղին պատկանող բույսերում (լատ.՝ Erythroxylum coca (կոկայի թուփ), որոնք տարածված են Հարավային Ամերիկայի արևադարձային շրջաններում: Իրենց ցավազրկող և թմրեցնող հատկությունների շնորհիվ՝ կոկայի տերևները երկար ժամանակ օգտագործվել են Հարավային Ամերիկայի բնիկ հնդկացիների կողմից:

Կոկաինն օփիոիդներից հետո՝ մեթամֆետամինի և ամֆետամինի հետ միասին, երկրորդ «խնդրահարույց թմրամիջոցն» է (թմրամիջոցներ, որոնց գործածումն առաջ է բերում ոչ միայն առողջական, այլև սոցիալ-հոգեբանական լուրջ

խնդիրներ): Կոկաինի փոշին (այսպես կոչված՝ «արահետները») շնչառական ընդունման համար:

Հերոին

Հերոինի արտադրական կամ լաբորատոր սինթեզի հումք է հանդիսանում մորֆինը: Քացախաթթվի անհիդրիդով և սցետիլքլորիդով սցետիլացումը տեղի է ունենում տաքացման միջոցով:



Ռեակցիան շրջելի է, այդ իսկ պատճառով հավասարակշռության պահպանման համար օգտագործվում է քացախաթթվի անհիդրիդի զգալի ավելցուկը: Ացետիլքլորիդի մեծ քանակությամբ ավելցուկի անհրաժեշտություն չկա, քանի որ այդ դեպքում առաջացող ջրածնային քլորիդը մասնակիորեն միանում է մորֆինային միջուկի ազոտային հիմքին և մասնակիորեն դուրս է գալիս խառնուրդից գազի տեսքով, ինչը գրեթե ամբողջովին ապահովում է հավասարակշռություն դեացետիլային ածանցյալի օգտին: Ստացված դիացետիլմորֆինի հիդրոքլորիդը կամ սցետատը փոխարկում են հիմքի և մաքրում անջուր էթիլ սպիրտով վերաբյուրեղացման միջոցով՝ ավելացնելով ակտիվացված ածուխ: Ռեակցիայի արդյունքը կազմում է մինչև 95,5%:



Թունավորումներ

Որոշ քիմիական նյութեր թունավոր ազդեցություն ունեն: Դրանք այնքան ուժեղ են ներգործում օրգանիզմում կատարվող գործընթացների վրա, որ լրիվ խախտում են նրա կենսագործունեությունը:

Թույնն այն նյութն է, որը թափանցելով մարդու մարմին, խաթարում է նրա գործունեությունը և կարող է բերել մահվան: Որպես թույն կարող են հանդես գալ որոշ քիմիական միացություններ, որոնք օգտագործվում են արդյունաբերության մեջ և կենցաղում, կենսաբանական ծագում ունեցող որոշ նյութեր (մանրէների, օձերի, կարիճների և միջատների թույներ), ինչպես նաև դեղանյութեր և այլն: Թույները կարող են լինել պինդ նյութեր, հեղուկներ կամ գազեր: Թույները մարդու մարմին ներթափանցում են չորս ուղիներով՝ կլման, ներշնչման, ներծծման, ներարկման:

Կլվող թույներն այն թույներն են, որոնք մարդու մարմին ներթափանցում են մարսողական համակարգի միջոցով: Կլվող թույները լինում են քայքայիչ և ոչ քայքայիչ: Քայքայիչ թույներ են ուժեղ թթուներն ու հիմքերը, որոնք վնասում և քայքայում են հյուսվածքները: Ոչ քայքայիչ թույներ են ալկոհոլը, դեղամիջոցները, կենցաղում օգտագործվող մի շարք նյութեր (լվացող միջոցներ, պարարտանյութեր և այլն): Այս ենթախմբի թույները կարող են պարունակվել նաև սննդամթերքում:

Ներշնչվող թույներն այն թույներն են, որոնք մարդու մարմին ներթափանցում են շնչառական համակարգի միջոցով: Ներշնչվող թույներ են որոշ նյութերի գոլորշիներ, գազեր, ինչպես օրինակ՝ շոլ և ածխաթթու գազերը, քլորի գոլորշիները և այլն:

Ներծծվող թույներն այն թույներն են, որոնք մարդու մարմին ներթափանցում են մաշկի և լորձաթաղանթների միջոցով: Ներծծվող թույներ են, օրինակ՝ որոշ բույսերի մեջ

պարունակվող թույները, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ օգտագործվող պարարտանյութերը և թունավոր նյութերը:

Ներարկվող թույներն այն թույներն են, որոնք մարդու մարմին թափանցում են անմիջապես արյան կամ հյուսվածքների մեջ ներարկման միջոցով: Ներարկվող թույները կարող են ներթափանցել մարմին կենդանիների, օրինակ՝ օձերի կծելու, կարիճների կամ միջատների խայթելու (մեղու, իշամեղու և այլն) և դեղորայքի սխալ ներարկման հետևանքով:

Թունավորման ծանրությունը կախված է մի շարք գործոններից՝

- թույնի տեսակից,
- թույնի քանակից,
- թույնի՝ մարմին ներթափանցման ուղուց

Եզրակացություն

Ամփոփելով աշխատանքը, հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

Թմրամոլությունը մեծ չարիք է: Թմրանյութերը համաճարակի նման ոչնչացնում են մարդու օրգանիզմը: Ամեն օր քայքայում են միլիոնավոր մարդկանց առողջությունը:

Առավել անհանգստացնող է երիտասարդ սերնդին հասցվող վնասը: Երիտասարդներն ավելի հակված են օրինազանցության: Նրանք ավելի հաճախ են հիվանդանում:

Թմրանյութերի վնասակար ազդեցության մասին ճշմարիտ տեղեկությունները կարող են փրկել մարդկանց կյանքը:

Առօրյա կյանքում հաճախ են պատահում թունավորումներով ուղեկցվող արտակարգ իրավիճակներ:

Երեխաների թունավորման դեպքերի մեծամասնությունը ծնողների (մեծահասակների) անզգուշության, անուշադրության հետևանք է:

Մեծահասակների մոտ թունավորումների պատճառ են հանդիսանում ինքնասպանության նպատակով թույների միտումնավոր օգտագործումը կամ դեղերի սխալ ընդունումն ու չարաշահումը, ինչպես նաև անզգուշությունն ու անփութությունը:

Հանդիպում են նաև մասնագիտական թունավորումներ, օրինակ՝ երբ մարդն աշխատում է թունավոր միջավայրում, որտեղ չեն պահպանվում անվտանգության կանոնները (քիմիական արդյունաբերություն, գիտա-հետազոտական հիմնարկներ և այլն):

Շատ կարևոր է ժամանակին ճանաչել թունավորումները:

Դեպքի վայրի զննումը, պատահարի վերաբերյալ տուժածի կամ ներկաների տված տեղեկությունները և տուժածի զննումը օգնում են ճանաչել թունավորումները:

Անհրաժեշտ է ուշադիր զննել շրջապատը:

Տարօրինակ հոտերը, վառվող կրակը, տուժածի կողքին ընկած բաց և դատարկ դեղատուփերը, ներարկիչները, ասեղները և այլն, կարող են շատ բան հուշել:

Թունավորման նվազագույն կասկածի դեպքում անհրաժեշտ է անմիջապես ահազանգել շտապ օգնություն:

Օգնություն ցուցաբերելիս անհրաժեշտ է օգտագործել ռետինե ձեռնոցներ կամ այլ պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ պլաստիկ տոպրակ: Խուսափել թունավոր նյութի հետ անմիջական շփումից:

Թունավորումները շատ ավելի հեշտ է կանխարգելել, քան բուժել: Սա շատ պարզ սկզբունք է, որը ցավոք, մարդիկ հաճախ անտեսում են:

Դեղերի և թույների տարբերությունը չափաբաժնի մեջ է: Ցանկացած նյութ, նույնիսկ կերակրի աղը շատ մեծ չափաքանակներով, կարող է թունավոր լինել: Սակայն փոքր չափաքանակներով ուժեղ թույները նույնպես կարող են օգտագործվել դեղապատրաստուկներում:

Աշխատանքս ավարտում եմ մեծն Ի. Պ. Պավլովի խոսքերով. «Հարկ չկա երկար ապացուցելու ֆարմակոլոգիայի՝ որպես ֆիզիոլոգիայի մի մասի նշանակությունը: Այն ծանոթացնում է բժշկին իր գլխավոր զենքի՝ դեղի հետ, ցույց է տալիս, թե ինչ է անում օրգանիզմում և ինչ կարելի է սպասել այս կամ այն քանակներով օգտագործելիս»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սաքանյան Ս. Շ. Ֆարմակոլոգիա: Դասագիրք բուհերի համար: 2-րդ վերամշակված և լրացված հրատարակություն: „Լույս», հրատ., Երևան, 1985թ:
2. Լեսթեր Գրինսփուն, Ջեյմս Բ. Բաքլար: Մարիխուանա. արգելված դեղամիջոց
3. Ա.Պ.Օրեխով Ալկալոիդների քիմիան: Մոսկվա, 1955թ.
4. Ի. Ն. Պյատնիցկայա, Ընդհանուր և մասնակի թմրագիտություն: Ձեռնարկ բժիշկների համար: Մոսկվա, 2008թ.:
5. Ի.Վ.Մարկովա Երեխաների և պատանիների կլինիկական թունաբանություն: Հատոր 1: Մոսկվա: 1998թ.
6. Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 12: Երևան, 1986թ.:
7. Հարությունյան Լ.Վ. Թանգամյան Տ.Վ. Ջավարյան Է.Լ. Բուսաբանական տերմինների ռուս-հայերեն բացատրական բառարան: Երևան, Հայբուսակ, 2002թ.

